

891.71

5-41

X ՅԱԻԵԼԻԱԾ «ՅՈՒՇԱՐԱՐԻ» X

≡ՆԱԽ ՄԵՌԱՆ≡ 60

ՅԵՏՈՅ ԱՄՈՒՄՆԱՑԱՆ

Կ Ա Մ


ԿԵՆԴՐՆԻ ՆՆՋԵՑԵԼՆԵՐ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ 2 ԴՈՐՆՈՂՈՒԹԵԱՄԲ

Հեղինակ՝ Մարտիրոս

Թարգմանիչ՝ Դ. Աւետիսյան

№ 1



Թ Ի Յ Լ Ի Ջ
Տպ. Ի. Տ. Ռոտմանցի
1908

891.71

Մ-41

30 SEP 2008

21.71
Մ-41

X ՅԱԵԼԻԱԾ «ՅՈՒՇԱՐԱՐԻ» 25 NOV 2010

≡ՆԱԽ ՄԵՌԱՆ≡

ՅԵՏՈՅ ԱՄՈՒՄՆԱՑԱՆ

Կ Ա Մ


ԿԵՆԴԱՆԻ ՆՆՋԵՑԵԼՆԵՐ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ 2 ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Հեղինակ՝ Մաքսիմով

Թարգմանիչ՝ Դ. Աւետեան

№ 1



Թ Ի Ֆ Լ Ի Ջ
Տպ. Մ. Տ. Ռոտինեանցի
1908

26 JUN 2013

Настоящая пьеса под заглавием „Поведе скончались, потом повѣнчались“ разрешена Намѣстникомъ Е. П. В. на Кавказѣ, для представленія на сценахъ края, 27 октября 1905 года, гор. Тифлисѣ.

Председатель комитета Гаккель

Секретарь Мелик-Нубаровъ

Ա Ն Ա Տ Ն Գ

ՈՍԻՊ ՖԵՕԳՈՐՈՎԻՉ ԽԼԻՍՏԻԿՈՎ,
ՍԵՐԳԷՅ, նրա որդին
ԼԻՋԱԻՆՍԱ ԽՎԱՆՈՎՆԱ ԿՎԱՇՆԻՆԱ
ՄԱՐԻԱ ԽՐԻՍՏԱՖՈՐՈՎՆԱ } նրա որդիքը
ԱՊՈԼԼՈՆ ԽՐԻՍՏԱՖՈՐՈՎԻՉ }
ՄԱՐՖԱ, ԽՐԻՍՏԻԿՈՎԻ խոհարարուհին

Միջանցք

կամար կամ դուռ

լապտեր

տախտ. նստարան

կվաշնինի դուռը
և սանդուխ.

Խրիստիկովի դուռը
և սանդուխ.

Բեմի լատակազիծը



13533-87

Ա. ԱՐԱՐԻԱԾ

Բեմը ներկայացնում է նախասենեակ՝ առաջին պլանում. ծախ դուռը ղեկավար Խրիստիկովի բնակարանը, աջ՝ կվաշնինի. յետքի կողմը սանդուխներ վեր եւ վար:

1) ՍԵՐԳԷՅ ԵՒ ՄԱՐԻԱ ԴԱՆՆԻՆԻ:

ՍԵՐԳԷՅ.— Խնամ՝ է կվաշնին: Դուք... Մաշինկա, հոգիս, մի բույլ դուրս եկէք, հետաքրքիր նորութիւն պիտի հաղորդեմ ձեզ:

ՄԱՐԻԱ.— Ներեցէք, չեմ կարող:

ՍԵՐԳԷՅ.— Ինչո՞ւ չէք կարող:

ՄԱՐԻԱ.— Զբաղւած եմ:

ՍԵՐԳԷՅ.— Բայց ես էլ ձեզ գործի համար եմ կանչում:

ՄԱՐԻԱ.— Ճիշտն ասած, ոչ թէ զբաղւած եմ, այլ չեմ համարձակուում դուրս գալ:

ՍԵՐԳԷՅ.— Ինչո՞ւ:

ՄԱՐԻԱ.— Դուք գուցէ մոռացել էք, որ մայրիկը արգելել է ձեզ հետ տեսնուել:

ՍԵՐԳԷՅ.— Ի՞նչ լիմարութիւն, շատ էլ արգելում է:

ՄԱՐԻԱ.— Ձեր ձեռքից ազատում չկար. Դէ ինչ էք ուզում:

ՍԵՐԳԷՅ.— Նախ թող տւէք համբուրել ձեր ձեռքը, երկրորդ ուրախացնել ձեզ, Մարիա Խրիստափորովնա, գիտէք, երեկ իմ պաշտօնը բարձրացրին:

ՄԱՐԻԱ.— Ուրախացէ՛ք: Միթէ, իսկ ոտճիկդ, աւելացրին:

ՍԵՐԳԷՅ.— Ի հարկէ: Այժմ մնում

է միայն որ դուք իմ կինը դառնաք: ՄԱՐԻԱ.— Տէ՛ր: Ա՛խ, միայն ձեզանից է կախած:

ՍԵՐԳԷՅ.— Սպիտակքն իմ պարտքերից— ուզում էք ասել. դուք մի անհանգստանաք, նրանցից ազատելը զբաւար է:

ՄԱՐԻԱ.— Միթէ:

ՍԵՐԳԷՅ.— Ազնիւ խօսք:

ՄԱՐԻԱ.— Բայց ինչպէս:

ՍԵՐԳԷՅ.— Շատ հասարակ կերպով. կը վճարեմ, պրծաւ գնաց:

ՄԱՐԻԱ.— Խեղաքան: Սարսափելի է, բոլորովին անհոգ մարդ էք, դուք ինձ ամենեկին չէք սիրում, իսկ ես... Լու՜ն, ես ուղղակի ասում եմ ձեզ, Ը՛հ:

ՍԵՐԳԷՅ.— Եւ դուք այդ ասում էք առանց կատակի: Յտեաութիւն Մարիա Խրիստափորովնա:

ՄԱՐԻԱ.— Ի՞նչ էք գնում:

ՍԵՐԳԷՅ.— Գրասենեակ, ժամը 10-ն է, կարող եմ ուշանալ:

ՄԱՐԻԱ.— Իսկ հաշտւել չէք ցանկանում:

ՍԵՐԳԷՅ.— Ուրեմն էլ բարկացած չէք:

ՄԱՐԻԱ.— Ո՛չ, չը նախ՝ որ ինձ սաստիկ վիրաւորեցիք:

ՍԵՐԳԷՅ.— Օ, հրեշտակա, դուք գանձ էք և ոչ թէ աղջիկ: Այո, ես շատ

լանցաւոր եմ ձեր առաջ, բայց ազնիւ խօսք եմ տալիս, որ կուղղեմ, կաշխատեմ պարտքերից անպատճառ ազատել, գիշերօցերեկ կաշխատեմ, միայն թէ ներեցէք ինձ:

ՄԱՐԻԱ.—Դէ, ժամանակ է արդէն, գնացէք:

ՍԵՐԳԷՅ.—Գնում եմ, ցտեսութիւն: Հաճեցա՞նք ձեզ: Եւ ի՞նչ պատահեցա՞նք:

ՄԱՐԻԱ.—Ցտեսութիւն:

ՍԵՐԳԷՅ.—Թող տէք, մի անգամ էլ, այնպէս, ապագայի հաշիւն:

ՄԱՐԻԱ.—Դէ, դէ, դուք սկսում էք արդէն չարութիւն անել, գնացէք, մարդս չպէտքէ մոռանալ նաև իր պարտականութիւնները, գնացէք: Նա հիմա է, Մարիան հիմա չմտաւոր է յիշում է ասանք:

2). ԱՊՈԼԼՈՆ ԳԵՐԳԵՆԻՍԻ ԽԼԻՍՏԻԿՈՎ և ՄԱՐՖԱ ԳԵՐԳԵՆԻՍԻ

ԱՊՈԼԼՈՆ.—Սէր, ինչ բան է սէրը, ցանկութիւն, ուրիշ ոչինչ: Մտնում է իր սենյակը. ինչ լաւ է երկար թափառելուց լետոյ վերադառնալ հարեանական տունը և հարազատ քրոջը կրծքին սեղմել:

ԽԼԻՍՏ.—Խաչաւորութեան, Լաւ, լաւ, առանց քաղաքաւարութեան էլ եօլա կը գնանք, դու քաղաքաւարի եղբոր ուրիշ դէպքերում, իսկ թէ սանդուխտներից առաջ ով կը բարձրանալ, դու թէ ես, այդ միևնույն է:

ՄԱՐՖԱ.—Ինչպէս կարելի է զամբիւղով պարոնի առջևից գնալ:

ԽԼԻՍՏ.—Իստաւրի բան է, ինչպէս ես հրամայում եմ, այնպէս էլ արա: Գրգռից բռնալիս հանելով քայլ է առնում քառուրդէ, առանց ձևականութեան ներս կորի:

3). ԽԼԻՍՏԻԿՈՎ և ԱՊՈԼԼՈՆ.

ԱՊՈԼԼՈՆ.—Շատ ճիշտ է, Օսիպ Ֆէօդորովիչ. բարեւ ձեզ, լարդելի հարեան:

ԽԼԻՍՏ.—Յարգանքներս, առողջ եք:

ԱՊՈԼԼՈՆ.—Ոչինչ, դուք ինչպէս եք:

ԽԼԻՍՏ.—Է՛հ, ինչ առողջութիւն, բարձրանում եմ սանդուխտներով և շունչըս կտրւում է:

ԱՊՈԼԼ.—Լաւ, ինչու դուք անհանգստանում եք և շուկայ գնում:

ԽԼԻՍՏ.—Ապա ի՞նչպէս: Մտաւորի վրայ լոյս դնել չի կարելի, մի բան որ առանց հսկողութեան թողիր, կորած համարիր: Ալթման ծառաները սարսափելի բաներ են, բան առնելու որ ուղարկես՝ 10 կոպէկից 12-ը կը գողանան:

ԱՊՈԼԼ.—Մի՞թէ 12 կոպէկ:

ԽԼԻՍՏ.—Ասենք այդ այնպէս օրինակի համար ասացի: Աչքդ չպէտք է հեռացնես. Ա՛յ, օրինակի համար, շուկայից վերադառնալիս միշտ խոհարարուհուն առաջս եմ գցում, որովհետեւ այնքան նրանք գողութիւն են սովորել, որ եթէ փող չկայ գողանալու, ինչո՞նք զամբիւղից մի գազար կամ մի բոդկ կը գնեն գրպանը, իսկ եթէ այդ ամենայն օր կրկնւի, կը տեսնես որ տարւալ վերջը ահագին բան դառաւ:

ԱՊՈԼԼՈՆ.—Ի հարկէ, տարւալ վերջը կանի 365 գազար կամ բոդկ, իսկ եթէ նահանջ տարի է 366:

ԽԼԻՍՏ.—Ես հոգիս այդ օրինակի միայն օրինակի համար ասացի, որ այդ մարդկանց հաւատ ընծայել չի կարելի: ձարս կտրւած տանում եմ, ստորանում եմ և ստիպւած խոհարարուհու ետևիցն եմ գնում:

ԱՊՈԼԼՈՆ.—Նայելով...

Ջորջ, առաստաղը ընկնում է:

ԽԼԻՍՏ.—Ա՛յ, ա՛յ... Այդ ի՞նչ անտեղի կատակներ են: Առանց այն էլ հեց ունիմ, իսկ դուք վախեցնում եք: ԱՊՈԼԼՈՆ.—Ոչինչ, այնպէս կատակ անել ուզեցի:

ԽԼԻՍՏ.—Անցեալ երկուշաբթի գիշերը դուք դարձեալ մի այդպէս լիմար կատակ արիք, հէնց այն է ամենքս պառկել քնել էինք, որ դուք լանկարծ քղաւեցիք «հրդեհ», վեր թռանք վախեցած, կանաչ ուշաթափ եղան, ես հողիւ չմեռալ, դուրս եք վազում, իսկ դուք ալտեղ կանգնած ծիծաղում էք, զո՞ւր է զալիս ձեզ, ի՞նչ է:

ԱՊՈԼԼՈՆ.—Այն էլ ինչպէս: Է՛հ, թողնենք անցեալը և վերադառնանք ներկային. դուք ասում եք որ հեց ունիք և չնչապառ եք լինում սանդուխտներից բարձրանալիս, իսկ ամեն օր գնում եք շուկայ, ինչո՞ւ ձեր որդուն չէք ուղարկում:

ԽԼԻՍՏ.—Բան ասացիր. Սերգէյը գնալ շուկայ. Ալթման երիտասարդները միայն պահել ու թուղթ խաղալ գիտեն:

ԱՊՈԼԼՈՆ.—Ասենք ես էլ ես սիրում ալդ, կեսնքը կարճ է, պէտք է օգտուել նրա հրապուրները բոլորները որսալ:

ԽԼԻՍՏ.—Որսացէք, որսացէք, իմ Սէրգէյն էլ որսաց, որսաց և ուղիղ 2000 ռուբլի պարտք որսաց:

ԱՊՈԼԼՈՆ.—Նա հիմա խելօքացել է, և այլևս պարտք չի վերցնում ոչ ոքից:

ԽԼԻՍՏ.—Ջարմանալի չէ, որովհետեւ նրան ոչ ոք չի հաւատում:

ԱՊՈԼԼՈՆ.—Սրամիտ է: Բայց

դուք իբրեւ ծնող կարող էք վճարել նրա պարտքերը:

ԽԼԻՍՏ.—Խոհարհաբար չնորհակալ եմ. ես չեմ սիրում ուրիշի գործերին խառնել:

ԱՊՈԼԼՈՆ.—Ասենք ինչ բան է փողը, իմ աչքում նա ցանցառութիւն է, ատելի մետաղ:

ԽԼԻՍՏ.—Ա՛յ, դուք ասում եք փողը, որովհետեւ ձեր մալըը նրանից շատ ունի և նրա մահից լետոյ կեսը կը մնալ ձեր գրպանը:

ԱՊՈԼԼՈՆ.—Ամենևին: Համաձայն լեցէք որ, ձեր որդին, ինչպէս ասում են—խելագարած է քրոջս վրայ, հարկաւոր է որ դուք արտասանէք միայն մի բառ, որից կախած է երկու քնքոյն, կրակոտ սրտերի բաղդը, և այդ բառն է՝ «վճարում եմ»:

ԽԼԻՍՏ.—Ո՛չ, ձեր խոհարհ ծառան եմ, բայց այդ ես չեմ ցանկանում: Ա՛յ, եթէ դուք այդքան ցանկացող էք ներանց բաղդաւորութեանը՝ խնդրեցէք ձեր մօրը արտասանել այդ բառը, նա էլ կարող է նրանց երջանկացնել:

ԱՊՈԼԼՈՆ.—Ես արդէն նրան ասել եմ, բայց նա զիտէք հօ, որ կինն էլ քնքոյն արարած է, իրա կապրիզներն ունի:

ԽԼԻՍՏ.—Ա՛յ, տեսնում եք, ես էլ այնքան ուղիղ արարածներից չեմ:

ԱՊՈԼԼՈՆ.—Լաւ է: Ալթմ ես տեսնում եմ որ մարդկանց կրքերի մէջ ամենամեծը և ամենատեղիւն ժխտութիւնն է:

ԽԼԻՍՏ.—Ի՞նչ, Վերադառնալ, Ցտեսութիւն, Գնում է բռն և փոխում:

ԱՊՈԼԼՈՆ.—Հա, հա, վերադառնալ Զահարաւոր է իմ քառուս:

ԻՎԱՆ.—Նշուց. Ո՞վ է:

ԱՊՈԼԼՈՆ.—Ի՞նչ է, չեմ ճանաչում:

չում: Մարտի 2-ին:

4). ԼԻԶԱԽԵՏԱ ԻՎԱՆՈՎՆԱ և ՍԵՐԳԵՅ:

ԼԻԶԱԽԵՏԱ.—Ինչպէս երևում է պարոնս, դուք այսօր բարձր պաշտօն ստանալու առիթով վաղ էք վերադառնում տուն: Այժմ ի հարկէ գործ քիչ կունենանք:

ՍԵՐԳԵՅ.—Ո՛չ, ընդհակառակը, այժմ կաւելանալ գործս:

ԼԻԶԱԽԵՏԱ.—Ե՛ր ինչպէս, ռոճիկդ էլ աւելացրին:

ՍԵՐԳԵՅ.—Այո, 300 ռուբլի:

ԼԻԶԱԽԵՏԱ.—Ե՛ր փառք Աստծոյ, այժմ ձեր գործերը կարգի կը դնէք:

ՍԵՐԳԵՅ.—Այո կաշխատեմ բոլոր ոյժով, Լիզաւետա Իվանովնա, ես կարող եմ լուս ունենալ:

ԼԻԶ.—Ի հարկէ, ի հարկէ, ես քեզ չատ եմ սիրում, դու լաւ տղայ ես: Բայց պարտքերդ, պարտքերդ, աշխատիր նրանցից վիզդ ազատել, լետոյ մի ուրախ հարսանիք կանենք:

ՍԵՐԳԵՅ.—Ինչքան որ աշխատես, երեք տարում հազիւ կարելի է վճարել այդքանը:

ԼԻԶ.—Մի կերպ համոզէիք զոնէ հօրդ, ինչ մի մեծ բան կը լինի նրա համար վճարել քո փոխարէն. նա քեզ սիրում է:

ՍԵՐԳԵՅ.—Գժբաղտաբար նա փողը աւելի է սիրում:

ԼԻԶ.—Ա՛խ ժլատութիւն, ժլատութիւն, շատ մեծ մեղք է:

ՍԵՐԳԵՅ.—Կա՛նք. Գոնէ դու չասէիր: Նրան. Լիզաւետա Իվանովնա, դուք համաձայն էք ձեր աղջիկը ինձ տալու:

ԼԻԶ.—Կամենաք այս բոսէին:

ՍԵՐԳԵՅ.—Եւ ի հարկէ նրան օժիտ տալու էք:

ԼԻԶ.—Ճիշտ 7000 ռուբլի, և այն էլ կանխիկ:

ՍԵՐԳԵՅ.—Գիտէք ինչ, տւէք նրան օժիտ միայն 5000 ռուբլի, իսկ 2000-ով իմ պարտքերս վճարեցէք:

ԼԻԶ.—Ի՛նչ ես ասում, ինչ իրաւունքով ես ձեռք տամ նրա փողերին, ինչո՞ւ համար ես խլեմ ձեզանից 2000-ը:

ՍԵՐԳԵՅ.—Մեզ բաւական կը լինի և 5000 ռուբլին, ես մինչև անգամ համաձայն եմ որ վճարէք իմ պարտքերը, ես ուրիշ ոչինչ չեմ ուզում:

ԼԻԶ.—Ո՛չ, միայն քո ռոճիկը ապրելու համար բաւական չէ, դուք երկուսդ էլ դեռ երիտասարդ էք:

ՍԵՐԳԵՅ.—Աւելի լաւ է որ ձեր համաձայնութիւնը տաք, ես ոչինչ չեմ ուզում, ինքս կը վճարեմ պարտքերս:

ԼԻԶ.—Այդ քեզ պատիւ է բերում, տեսնում ես ուրախանում եմ, որ դու սիրում ես իմ աղջկան առանց դիտաւորութեան, բայց ես պատւի դէմ մի քաջ անգամ չեմ անիլ, ո՛չ, ո՛չ:

ՍԵՐԳԵՅ.—Ինչքան զժար է գործ ունենալ աղնիւ լիմարների հետ: Նրան. Լիզաւետա Իվանովնա:

ԼԻԶ.—Ի՛նչ է:

ՍԵՐԳԵՅ.—Գոնէ թող տւէք մէկ մէկ լաճախեկ ձեզ մօտ, որ կարողանամ տեսնել Մարիա Խրիստափորովնային:

ԼԻԶ.—Ո՛չ, ո՛չ, ո՛չ, միանգամ բնդ-միշտ ասացի որ չեմ կարող: Ի հարկէ դու աղնիւ մարդ ես, ես քեզ շատ եմ սիրում և հաւատում եմ, բայց աշխարհիս բանը խօ գիտես, իսկոյն կըսկսեն բամբասել, արատաւորել նրան...:

ՍԵՐԳԵՅ.—Դէ նշանեցէք մեզ, այն ժամանակ չեն համարձակւիլ բամբասել:

ԼԻԶ.—Ո՛չ հոգիս, չար մարդիկ խօսելու բան կը գտնեն, ճար չըկայ:

այետք է համբերել մի քիչ: Շատ ես սպասել, մի քիչ էլ սպասիր, ամեն ինչ լաւ կը վերջանալ: Զանգեղանք է:

ՍԵՐԳԵՅ.—Գլխով Բարեւո՛ւմ ե՛ք և շարունակե՛ք: Տե՛ղիս որ հոգեւոր է ինչ: Պա՛նը.—Ո՛չ, զժար է զրան փափկացնելը, ուզում է ցոյց տալ որ կամքի տէր է, իրա խօսքը ինչպէս լաւ է պահում, իսկ չէ մտածում նրա մասին որ հարազատ աղջկան զրկում է բաղ-դաւորութիւնից:

5). ՍԵՐԳԵՅ ԵՒ ՄԱՐԻԱՄ

ՄԱՐ.—Դուք ի՞նչ եք անում: Սերգէյ Օսիպովիչ, այդ ինչ է, ում վրայ էք այդպէս բարկացած:

ՍԵՐԳ.—Ձեր մօր, մի նեղանաք, բայց այս բոլորը ձեզ սիրելուցս է:

ՄԱՐ.—Գնացէ՛ք, ինչպէս կարող էք ինձ սիրել՝ երբ մօրս մասին այդպէս էք խօսում:

ՍԵՐԳ.—Ներողութիւն, ես բոլորովին կորցրել եմ զուխս, խնայեցէք ինձ, եթէ ես չը լինէի, վաղուց լաց կը լինէի: Լա՛ւն է. Ա՛յ տեսէք, արտասուք է գալիս, ախ:

ՄԱՐ.—Լա՛ւն Ա՛խ, խեղճ Սերեոժա, իսկապէս արտասուք է:

ՍԵՐԳ.—Մաշինկա, դուք ինչո՞ւ համար էք լալիս, թողէ՛ք որ միայն ես տանջւիմ: Բաւական է: Սերեոժա ե՛ք Լա՛ւն: Ի՛նչ եք անում:

ՄԱՐ.—Այո, պետք չէ լալ, գլխիս բոս կը ցաւի, աչքերս կուռնի, վաղը ամենքը կը նկատեն: Սերեոժա, մի լար: Դէ խնդրում եմ, Սերեոժա ե՛ք Լա՛ւն: Ի՛նչ եք անում:

6) ՆՐԱՆՔ ԵՒ ԼԻԶԱԽԵՏԱ ԻՎԱՆՈՎՆԱ

ԼԻԶ.—Տէր Աստուծ, այս ինչ է:

ՄԱՐ.—Նրանից հետո՛ւ ցոյց տուաւ ՍԵՐԳ.—Մէկ-մի. Ժամանակ դառաւ սա էլ այստեղ գալու:

ԼԻԶ.—Ա՛խ դու անամօթ, այդ ինչեր ես անում, օտար մարդու վզին ես փաթաթում, հա... Գոնէ սենեակում լինէր, ապա թէ ոչ այստեղ սանդուխների վրայ, ուր ամեն մէկը կարող է տեսնել:

ՍԵՐԳԵՅ.—Լիզաւետա Իվանովնա: ԼԻԶ.—Լա՛ւր, պարոնս, քեզ հետ լետոյ: Աղջիկ, իսկ դու տիրուհիս, ինչ կասես, հա...:

ՄԱՐ.—Մալրիկ... ԼԻԶ.—Եւ ես լիմարս հաւատացի նրան, իբր թէ գնում է ընկերուհու մօտ նրա զգեստը ձեւելու, իսկ նա ահա թէ որտեղ է, և տես թէ ինչ ֆառսներ է ձեւում:

ՄԱՐ.—Մալրիկ, ես անդիտակցաբար...:

ԼԻԶ.—Ի՛նչ, անդիտակցաբար ուրիշի վզին փաթաթւեցար:

ՍԵՐԳ.—Լիզաւետա Իվանովնա... ԼԻԶ.—Լա՛ւր, պարոնս, քեզ համար էլ դեռ ժամանակ կը գտնեմ: Աղջիկ, Այդպէս ես կատարում իմ պատուէրները, ինչ էի քեզ ասել, զէ պատասխանիր, չուտ:

ՄԱՐ.—Մալրիկ, ես...:

ԼԻԶ.—Լա՛ւր, սպասիր, ես քեզ հետ հաշիւս կը վերջացնեմ:

ՍԵՐԳ.—Կա՛նք. թե՛, կամ պատասխանիր, կամ լա՛ւր:

ԼԻԶ.—Աղջիկ, Լա՛ւր Բարեւո՛ւմ ե՛ք քեզիս. Գեղ հետ ասեմք տանն էլ կը խօսեմ, իսկ այժմ. քեզ հետ պարօնըս: Գեղ ե՛ք քեզիս: Սերգէյ: Ե՛ք ե՛ք Լա՛ւն: Ի՛նչ եք անում:

ՍԵՐԳ.—Լիզաւետա Իվանովնա...:

ԼԻԶ.—Լա՛ւր... Եւ չեմ ամաչում:

ԼԻԶ.—Դուք է՞նչ.—Այս քնն է, հավ է դռները բաց թողել այսպէս: Դուք է՞նչ: Ապրիլուն, քնն էս չինում այդ տեղ:

ԱՊՈԼԼՈՆ.—Կո՞ւշ: Այժմ սրան վախեցնենք: Նշու. ես գիտեմ եմ, ամեն քնն կորսւ:

ԼԻԶ.—Վախեցու. Ի՞նչ է, քնն է պատահել:

ԱՊՈԼԼՈՆ.—Խեղճ Սերգէյ Օսիպո-

վիչը այս բոլորէիս առողջ էր, և լանկարծ:

ԼԻԶ.—Ի՞նչ է պատահել նրան:

ԱՊՈԼԼՈՆ.—Այս բոլորէիս սրտի պալթիւնից մեռաւ:

ԼԻԶ.—Ներքէնէն: Օ՛հ...

ԱՊՈԼԼՈՆ.—Հն, հն, քնն լիմարացրի, այժմ գնամ զբոսնելու:

Դուք է չէ՞նք:

ՎԱՐԱԳՈՅՐ

Բ. ԱՐԱՐԻԱԾ

Նշն տեսարանը, երեկոյ է, բեմը լուսաւորւած է մի զոյն մի լապտերով

Իմանալ: Ծածկւած է երեւ Քաշիւնէն:

3). ԼԻԶԱԿԵՏԱ ԵՒ ԽԼԻՍԻԿ. Դուք:

1). ԼԻԶԱԿԵՏԱ ԵՒ ՄԱՐԻԱ. Դուք:

ԼԻԶ.—Տէ՛ր, Է չէ՞նք: Մարիա, Գնա Մաշինկա, մօրաբորջդ մօտ, մի փոքր ժամանակ, աչտեղ ուրախ կանցնի քեզ համար, նրանց այգին ուղղակի ամառանոց է:

ՄԱՐ.—Մալրիկ, ինձ համար տանն էլ ուրախ է անցնում, ես ձեզ հետ կուգէի մնալ:

ԼԻԶ.—Ես ուղիղն ասած, ուղում էի քեզ սիրապրիզ անել, Ըրաց հարահատեալ պիտի աւեմ. քո սենեակը ես ուղում եմ նորոգել, վաղը առաւօտեան շատ վաղ բանտրները կը դան:

ՄԱՐ.—ձգմարիտ, ախ, որքան բարի էք դուք, Մալրիկ:

ԼԻԶ.—Հապա ու՛մ համար պէտք է անեմ, դու իմ սիրելին ես, ուրախութիւնս ես: Հա՛ւա՛ւա՛ւ է նշ. Դէ, գնա:

ՄԱՐ.—Ուրեմն ցտեսութիւն մալրիկ: Հա՛ւա՛ւա՛ւ է:

2). ԼԻԶԱԿԵՏԱ. Մաշին:

ԼԻԶ.—Խեղճ, չի էլ կասկածում թէ ինչու համար եմ ես նրան հեռացնում: Ափսոս, շատ ափսոսում եմ խեղճ Սերգէյ Օսիպովիչին: Բայց սրտի պալթիւն: Խեղճը դեռ շատ երիտասարդ էր, գուցէ նրանից մեռաւ, որ ես չը համաձայնեցի Մաշային տալ նրան: Ի՞նչ սարսափելի բան է մահւան պատճառ դառնալ, բայց ես ճիշտեղից կարող էի

ԽԼԻՍ.—Ո՛հ, աւելի լաւ է փողոց գնամ: Պատկեցի քիչ քնելու, բայց հէնց որ աչքերս փակում էի, խկոյնն ննջեցեալն էր երևում աչքիս առաջ, և դժբաղդ աղջկալ ձայնն էի լսում: Տէ՛նէնէ Լիւս-Էռայն: Ա՛հ, ասա նա, դժբաղդ մալրը դուրս է եկել, լաց լինելու ստեղծութիւնների վրայ, ի հարկէ սենեակում շատ ծանր է:

ԼԻԶ.—Տէ՛նէնէ Էռայն: Ա՛հա դժբաղդ: հալրը, լաց էլ չի լինում խեղճը, իհարկէ, արցունքները չորացել են: Ի հարկէ շատ ցաւալի է այնպիսի որդի կորցնել:

ԽԼԻՍ.—Կո՞ւշ: Պէտք է մի տեսակ մխիթարել նրան, բայց ինչպէս սկսեմ, չը գիտեմ:

ԼԻԶ.—Ուղում եմ նրան հանգըստացնել, բայց վախնում եմ աւելի, չը վրդովի:

ԽԼԻՍ.—Այսպիսի դէպքերում մխիթարանքը աւելի է մարդու ցաւերը սաստկացնում:

ԼԻԶ.—Կո՞ւշ: Ասենք եթէ ես սկսեմ, գուցէ նա լաց լինի, ալդ նրան կը թեթեացնի:

ԽԼԻՍ.—Կո՞ւշ: Պարտքը պահանջում է մխիթարել վշտացեալներին: Կո՛ւշ, Էռայն: Ե՛հ, Լիզաւետալ Իվանովնա:

ԼԻԶ.—Է՛հ, Օսիպ Ֆեոդորովիչ...

ԽԼԻՍ.—Հանգաւ...

ԼԻԶ.—Այո, հանգաւ:

ԽԼԻՍ.—Ի՞նչ արած:

ԼԻԶ. — Այո, ինչ արած, երեւի նը-
քան այդպէս էր ցանկալի

ԽԼԻՍ. — Կոչ, ես չէի կարծում
որ նա այդպէս ոյժեղ է, կորցնել միակ
դոստորը... Նրան. Պէտք է հաշտել, տա-
նել բոլորը անտրտունջ...

ԼԻԶ. — Ի հարկէ, Կոչ. Խոստովա-
նում եմ, ես չէի կարծում որ նա կարող
է ալսլիսի սառնութեամբ տանել միակ
որդու մահը:

ԽԼԻՍ. — Ի՞նչ էք կարծում ինչն
էր արդեօք մահան պատճառը:

ԼԻԶ. — Վախենում եմ մտածել ան-
դամ, որ վշտիցն էր: Բայց ով կարող
էր կարծել, ես ուրախութեամբ կ'օրհնէի,
եթէ իմանայի:

ԽԼԻՍ. — Լիզաւետա Իվանովնա,
ես կարծում եմ այդ կորուստը ձեզ հա-
մար շատ ծանր է, չէ:

ԼԻԶ. — Ի հարկէ, ես նրան շատ
էի սիրում:

ԽԼԻՍ. — Կոչ, դարձեալ. «Շատ էի
սիրում», և այն պէս հանգիստ կերպով է
արտասանում այդ, ուրիշը նրա տեղը
հեղեղներ կը թափէր: Նրան. Լսեցէք,
Լիզաւետա Իվանովնա, իմ բանն ուրիշ
է, բայց ես շատ ցաւում եմ:

ԼԻԶ. — Կոչ, դարձեալ. Ի՞նչ է ա-
սում, «ես շատ ցաւում եմ», և այդ նա
իրա որդու մասին է ասում, խեղճ մարդ,
երեւի ցնդել է: Նրան. Ի՞նչ անես, վե-
րադարձնել չես կարող:

ԽԼԻՍ. — Թո՛ւ... զգուշի աղահու-
թիւն: Ո՛չ թէ միայն չէ ցաւում, կար-
ծեմ դեռ ուրախ էլ է, որ զրկւել է աղ-
ջկանից: Նրան. Լիզաւետայ Իվանովնա,
օրինակի համար, եթէ ես ձեր տեղը լի-
նէի, ա՛...
ԼԻԶ. — Յետո՛յ, ինչ...
ԽԼԻՍ. — Ներեցէք դուք ինձ, ի
հարկէ ամեն ոք իրա տեսակի է զգում,

ԼԻԶ. — Ի՞նչ էք ուզում ասել, ես
չեմ հասկանում: Կոչ. Ո՛չ, դժբաղդը բո-
լորովին ցնդել է, բոլորովին ցնդել:
Վախեցած չեք չեք է աւելում. Ի հարկէ պա-
րոնս, ի հարկէ, բայց ի՞նչ անել, ինչ
անել: Այդպէս է, այդպէս է... Կոչ. Փախչեմ
նրանից, նրան. Յետեւութիւն Օ-
սիպ Ֆեօդորովիչ, զնացէք, հանգստա-
ցէք, ինչ արած՝ ինչ արած... Արե՛ք ճի-
շում է որո՞նք և որո՞ւնք փնտռե՛մ:

ԽԼԻՍ. — «Ինչ արած». և այս մայրն
է ասում... օ՛հ, աղահուժիւն, աղահու-
թիւն... Շատ կը ցանկանայի մի ան-
գամ նայել ննջեցեալին, բայց չեմ հա-
մարձակւում...

5). ԽԼԻՍԻԿՈՎ ԵՒ ՄԱՐԻԱ ԴԵՐԵՅ:

Մարիա ժողովում է Դերեյի շնորհակալութիւն
ձեռնարկում է իրանց դռանը և պահպանում:

ԽԼԻՍ. — Ասենք ես բոլորովին
մեղաւոր չեմ նրա առաջ, ես նրան միշտ
սիրում էի, չէ, գնամ վերջին պարտքս
կատարեմ... Ես եւ փախչեմ գնալու, որտեղ
է Մարիան. Ո՛չ, այստեղ էլ է աչքիս ե-
րևում... Փախչում է որո՞նք որո՞նք և որո՞ւնք
փնտռե՛մ:

6). ՄԱՐԻԱ և ԼԻԶԱԻՍԱ.

ԼԻԶ. — Դուք քանի ժամ եմ Լիզա չեմ
ինչո՞ւ վերադարձար:

ՄԱՐ. — Նրանց տանը ոչ ոք չկայ,
բոլորն էլ մի շաբթով գիւղն են գնա-
ցել:

ԼԻԶ. — Ափսոս, ի՞նչ արած, ճար
չկայ: Գնա հոգիս, պառկիր, քիչ հան-
գըստացիր, դուք չը փակես, ես խնդրեմ
կը վերադառնամ: Մարիան Գնա է: Գնա
Աննա Վասիլենայի մօտ, վերեւ, խոր-
հրդակցեմ նրա հետ թէ ինչպէս նախա-
պատրաստենք Մարիային այս սարսա-
փելի լուրը լայնելու համար, աւելի
վատ եթէ նա լանկարծ իմանայ:
Գնա է Դերեյ:

7). ՍԵՐԳԵՅ. ՄԻՆԱ և ԴԵՐԵՅ

Այնտեղ էլ տխուր է: Ո՛չ մի գլար-
ձուլիւն չկայ, թէկուզ պառկիր, մեռիր,
միևնոյն է: Ի՞նչ է անում արդեօք Մա-
շան, նա էլ երեւի ինձ նման տանջւում
է: Մօթենում է նրանց դռան և քննելի
հայտնում: Ոչինչ չի երևում:

ԼԻԶ. — Մօթելով. Ափսոս, Աննա
Վասիլենան քնել է արդէն, ճար չկայ,
պիտի մնայ մինչև վաղը: Տե՛ղե՛ր Լիզա
Վախենում է: Ա՛հ, Տէր Աստուծ, այս ինչ
է... Սէրգէյը երեւոյ դարձեալ է Դերեյի նա
է, նա է, օգնեցէք...

ՍԵՐԳ. — Լիզաւետա Իվանովնա,
այդ դժբ. էք:

ԽԻԶ. — Նա կանչում է, մեռա՛լ...

ՍԵՐԳ. — Մօթենում է նրան. Լիզաւե-
տա Իվանովնա ինչ է պատահել ձեզ:

ԼԻԶ. — Ուղում է Դերեյի շնորհակալութիւն
էր դռան դուռը, ստիպեցին վազ: Ա՛յ, օգ-
նեցէք:

ՍԵՐԳ. — Լիզաւետա Իվանովնա,
հիւանդ հօ չէք:

ԼԻԶ. — Խղճա՛, աղջկաս դեռ չը տե-
սած մի թողնի որ մեռնիմ:

ՍԵՐԳ. — Ուզում էք ուղարկեմ բժշ-
կի ետեից: Թող տե՛ք ձեզ ներս տա-
նիմ: Ուղում է նրան ժողովում:

ԼԻԶ. — Ոյժը հաւատելով մի քիչ քաշե-
ում է, որոն նորից լինում: Ի՞նչ ես ուզում
դու ինձանից, ինչու ես վեր կացել:

ՍԵՐԳ. — Ես չեմ էլ պառկել:

ԼԻԻ. — Տանջանքներիդ վերջը հա-
սաւ: Հաշիւներդ ամենքի հետ վերջա-
ցրած են:

ՍԵՐԳ. — Ուրախացե՛ք. Ուրեմն հա-
րկիս վճարել է պարտքերս:

ԼԻԶ. — Աղջիկս այլ ևս չի կարող
պատկանել քեզ:

— Ինչո՞ւ, մի որեւէ բանից անբա-
ւական էք դուք:

ԼԻԶ. — Բաւական եմ, բաւական
եմ, միայն հեռացիր:

ՍԵՐԳ. — Դուք ասացիք որ ներում
էք ինձ և ես էլ համարձակւում եմ ըս-
պասել:

ԼԻԶ. — Սպասել իմ մահան հա՛...
Լսիր ես կը վճարեմ քո բոլոր պարտ-
քերը, միայն թող որ մտնեմ բնակա-
րանս...

ՍԵՐԳ. — Խնդրում եմ, ինձ շատ կը
պարտաւորեցնէք:

ԼԻԶ. — Միայն հեռացիր, քեզ մօտ
քալ անել չեմ կարող:

ՍԵՐԳ. — Ոչինչ չեմ հասկանում:
Հեռանում է Բէմի մօտ կոչ, Լիզաւետան քա-
շեւում է և մօտում էր դուռը:

8). ՍԵՐԳԵՅ. յետոյ ԽԼԻՍԻԿՈՎ և ԽՈ-
ՀԱՐԱՐՈՒԶԻ

ՍԵՐԳ. — Այս քնչ էր ասում, ես
չը հասկացայ, մի բան չէ պատահել
արդեօք նրանց տանը: Գոնէ Մաշին-
կան մի դուրս դար, հա բոլորը կը բա-
ցատրէր: Մօթենում է նրանց դռան: Խնդրե-
լով քաշ է անում, իր դռան, սառը փոս-
տով քաշում: Խոհարար-հուս, որ վառած ճո՛ւղ
անի յետին:
ԽԼԻՍ. — Նայիր, տես, նա դեռ
կանգնած է:

ԽՈՀԱՐԱՐ. — Ո՛չ այստեղ ոչ ոք չէ
երևում:

ԽԼԻՍ. — Լսիր, ես գնում եմ, կա-
րելի է միշտ առաւօտ չը վերադառնամ,
տանը լաւ նայիր, առանց հարցնելու
ոչ ոքի ներս չը թողնես:

ԽՈՀԱՐԱՐ. — Լաւ...

ԽԼԻՍ. — Ինձ ճանապարհ ձգիր
մոմով, բայց սպասիր, նորից նայիր,
տես նրանց դռան առաջ կանգնած չէ
ոչ ոք:

ԽՈՀԱՐԱՐ. — Այո, ով որ կան-

դնած է:

ԽԼԻՍՏ.—Ներսէս զոհ է:

ԽՈՂԱՐ.—Ի՞նչ է պատահել նրան, կենդանի սարդկանցից էլ է վախենում: Մօտենա՞մ է նրան: Ա՛խ, այդ դուք էք երիտասարդ պարոն: Պարոն, պարոն, մի վախենա՛ք, այդ Սերգէյ Օսիպովիչն է:

ԽԼԻՍՏ.—Դուք է՞նչ: Որդիս, իսկ ես վախից քիչ մնաց մեռնելի: Ներսէս է՞նչ: Սերեօթա, վերջապէս եկար, ես քիչ էր մնում մեռնելի: Խոհարար-հարս: Դու գնա՛լ:

ՍԵՐԳ.—Ի՞նչ է պատահել, հայրիկ:

ԽԼԻՍՏ.—Ես տեսա՛յ նրան... Ա՛խ, դու դեռ ոչինչ չը գիտես... Նրեակալիւր, ոչ, ոչ, չեմ կարող ասել, աւելի լաւ է թող մի ուրիշը խոցէ սիրտդ, ես իբրեւ ծնողդ չեմ կարող:

ՍԵՐԳ.—Հայրիկ, բարի եղէք, գոնէ բացատրեցէք:

ԽԼԻՍՏ.—Համբերի՛ր, վաղը առաւօտեան բոլորը կիմանաս. իսկ այժմ իբրեւ բարի հայր, ես ուզում եմ քո բոլոր պարտքերը վճարել: Ես այսօր համոզեցի որ վողը աղը է: Հանձն է պարտք: Ահա, Սերեօթա, ուղիղ 2000 բուրդի է, վերցրու, բաժանիր քո բոլոր պատասխաններին և բաղդաւոր եղի՛ր:

ՍԵՐԳ.—Սիրելի, բարի հայրիկ, չը գիտեմ, ինչպէս շնորհակալ լինիմ ձեզանից: Հօգուտ է նրա յօդու:

ԽԼԻՍՏ.—Ի՞նչ հարկաւոր է, հօր պարտքն է հոգս տանել որդիերանց մասին:

ՍԵՐԳ.—Օ՛հ, ես այժմ այնպէս բաղդաւոր եմ, գնամ ուրախացնում Մաշային:

ԽԼԻՍՏ.—Մաշայի՛ն... Մի շտապիր սիրելիս, սպասիր մինչև առաւօտ: Դուք է՞նչ: Աղաչում եմ, քաջ եղիր, տղամարդ ես:

ՍԵՐԳ.—Հայրիկ դուք ինձ վախեցնում էք, երեկ նրանց մի դժբաղդատ թիւն է պատահել:

9). ՆՐԱՆՔ և ԱՊՈԼԼՈՆ

ԱՊՈԼԼՈՆ.—Յարգանքներս, դուք դեռ չէ՞ք քնել:

ԽԼԻՍՏ.—Ուրախ Ահա, նրանից կարող ես իմանալ, բայց խնդրում եմ քաջ եղիր:

ՍԵՐԳ.—Ապուլոն խրիստափորովի, բացատրեցէք խնդրում եմ, ձեր տանը ի՞նչ է պատահել:

ԱՊՈԼԼՈՆ.—Այստեղ, ոչինչ:

ՍԵՐԳ.—Ինչո՞ւ ձեր մայրը այնպէս լուզւած է:

ԱՊՈԼԼՈՆ.—Չը գիտեմ:

ՍԵՐԳ.—Իսկ ձեր քույրը, ինչպէս է..

ԱՊՈԼԼՈՆ.—Նրեկ արդէն քնած է:

ԽԼԻՍՏ.—Ա՛խ, քնած է լաւիտենական խաղաղ քնով: Ներսէս. Ապուլոն խրիստափորովի, ծածկելը շատ աւելորդ է, վաղ թէ ուշ նա կիմանալ:

ԱՊՈԼԼՈՆ.—Կիմանալ ի՞նչը:

ԽԼԻՍՏ.—Քաշկով Ապուլոնի վրէժն է, ձեր քրոջ հոգու վրա մի բան է մնացել, որ արգելում է նրան հանգստանալ, նա վեր է կացել և մահ է գալիս:

ԱՊՈԼԼՈՆ.—Ի՞նչ անենք, որ մահ է գալիս:

ԽԼԻՍՏ.—Ես ինքս տեսա՛յ նրան, ահա հէնց այստեղ:

ԱՊՈԼԼՈՆ.—Յետո՞ր:

ԽԼԻՍՏ.—Ես նրան տեսա՛յ, ա՛յ ինչպէս ձեզ եմ տեսնում:

ԱՊՈԼԼՈՆ.—Յետո՞ր:

ԽԼԻՍՏ.—Գժրաղդ, նա քրոջ սիրուց ցնդել է, թաղցնելը ալ ևս անօգուտ է, հաւաքիր քո բոլոր ուժը և լըսիր... Քո Մաշան...

ՍԵՐԳ.—Ի՞նչ Մաշան... Մաշան է՞նչ:

ԽԼԻՍՏ.—Նա, նա...

ԱՊՈԼԼՈՆ.—Ահա Մաշան...

ԽԼԻՍՏ.—Ա՛յ, նա է, նա է... Փախէ՛ք:

10). ՆՈՅՆՔ ԵՒ ՄԱՐԻԱ

ՍԵՐԳ.—Վերջապէս եկա՛ք, հանգստացրէ՛ք ինձ, դուք առողջ էք:

ՄԱՐ.—Առողջ:

ՍԵՐԳԷՅ.—Դուք առողջ էք, ես բաղդաւոր: Մեր տանջանքները վերջացան:

ՄԱՐ.—Ի՞նչպէս:

ՍԵՐԳ.—Հայրիկը վճարել է իմ բոլոր պարտքերը, բայց դուք երեակալել չէ՞ք կարող, թէ ինչպէ՞ս նա ինձ վախեցրեց, ա՛յ, հէնց Ապուլոն խրիստափորովի է:

ԱՊՈԼԼՈՆ.—Ե՞ս, ես ինչ արի որ:

ՍԵՐԳ.—Ի՞նչ ասացիք ձեր քրոջ մասին:

ԱՊՈԼԼՈՆ.—Ես ասացի, որ նա քնած է, շատ բնական է:

ՍԵՐԳ.—Հարցնենք հօրիցս: Զանգահարե՛մ: Հայրիկ, մի բոլոր այստեղ եկէ՛ք:

ԽԼԻՍՏ.—Ներսէս. Չեմ կարող, վախենում եմ:

ՍԵՐԳ.—Մենք այստեղ միայնակ ենք, ուրիշ ոչ ոք չկալ:

ԽԼԻՍՏ.—Դուք է՞նչ: Կաշկով Այս ինչ բան է, թէ՛ ես եմ խելագարւել, Մաշիա խրիստափորովի, այդ դուք էք:

ՄԱՐ.—Ես եմ հայրիկ. Ուրախ է՞մ:

ԽԼԻՍՏ.—Թող աւէք, թող աւէք, մի մօտենա՛ք, հեռւից խօսեցէ՛ք: Այդ դուք էք և կենդանի էք:

ՄԱՐ.—Այս ինչ բան է, ես չեմ հասկանում:

ԱՊՈԼԼՈՆ.—Ա՛... Իսկ ես հասկանում եմ, բոլորովին մոռացել էի, հանգստացէ՛ք, չարգելի Օսիպ Ֆեօդորովի, այդ կատակ էր: Քոյրս ամենեին չի էլ մեռել, այդ ես կատակ արի:

ԽԼԻՍՏ.—Գոնէ պատերից ամաչէիք, ձեր չիմար կատակի պատճառով քիչ մնաց մեռնելի:

ԱՊՈԼ.—Միթէ, շատ վախեցրի ձեզ:

ԽԼԻՍՏ.—Ա՛խ, դուք ձեր չիմար կատակներով զահլաս տարաք, այդ նըրանից է, որ փոքր ժամանակ ձեզ քիչ են ձեռնել:

11) ՆՐԱՆՔ և ԼԻԶԱԿՏԱ

ԼԻԶ.—Դուք է՞նչ: Զանգահարե՛մ Սերգէյ: Աղջիկս, ինչո՞ւ ինձ միայնակ թողեցիր, Ապուլոն, վերջին ժամերիս մօտըս կնց:

ՄԱՐ.—Վերջին ժամերին, մայրիկ ինչ է պատահել որ այդպէս լուզւած էք:

ԼԻԶ.—Ապուլոն, պահպանիր քրոջդ, նրա միակ պաշտպանը դու պիտի լինիս, փոխարինիր նրան իբրեւ մայր:

ԱՊՈԼ.—Տո՛ւմ եմ: Ա՛խ, մայրիկ, ինչ էք ասում:

ԼԻԶ.—Օսիպ Ֆեօդորովի, ասացէ՛ք խնդրեմ, որքան պարտք ունէր ձեր որդին:

ԽԼԻՍՏ.—Ի՞նչ հարկաւոր է ձեզ:

ԼԻԶ.—Ես ուզում եմ վճարել:

ԽԼԻՍՏ.—Դուք, բայց ինչո՞ւ համար:

ԼԻԶ.—Ես այդ պիտի անեմ նրա հանգստութեան համար, դուք չը պիտի ընդիմանաք, այդ իմ վերջին խնդիրն է:

ՄԱՐ.—Լուսն. Մայրիկ, ինչ է պատահել ձեզ:

ԱՊՈՒ.—Երևի մի ծանր բան է վերջացնել ես կարող եմ ձեր որդին կերել, սրտին է նստել:

ՍԵՐԳ.—Ես գնամ բռնկի հանից:

ԼԻԶ.—Նրան հեռու չէ, Այն, նա այնտեղ է...

ԽԼԻՍ.—Սերեօֆան, դնա շուտով:

ԼԻԶ.—Այդ քննակետ, դուք խօսում էք նրա հետ, միթե նա մեռած չէ. քնն է նշանակում այս ամենը, այս ով ասաց... ան, լիշեցի. Բա՛ն-է՛ն-է՛ն. Այն ամենը դարձեալ քո հնարածն է երևի:

ԱՊՈՒ.—Մարիկ, այս ամենը ես արի կատակի համար:

ԼԻԶ.—Չէ, ինչպէս տեսնում եմ դու մինչև մահը էլ չիմար պիտի մնաս:

ՍԵՐԳ.—Լիզա, ես ի վանդանա,

վերջացնել ես կարող եմ ձեր որդին կուշել:

ԼԻԶ.—Ինչպէս:

ՄԱՐ.—Այն, մարիկ, Օսիպ ֆեդորովիչը վճարել է Սերեօֆի պարտքերը, օրհնեցէք մեզ:

ԼԻԶ.—Շատ ուրախ եմ, նշանակում է ես այլևս չը պէտք է վճարեմ, Այնպէս. Իսկ դու, ծաղրածու, միւս անգամ ես ինքս այնպիսի կատակ կանեմ քեզ հետ, որ ոտքերդ կը ձգես:

ԽԼԻՍ.—Այն, այն, ձեր կատակը ինձ 2000 նստեց: Այնքան չէ՞:

ՎԱՐԱԳՈՅՐ

Վ Ե Ր Զ



7
984
«ՅՈՒՇԱՐԱՐ»-ի Ա տարեշրջանի յաւելածներն են
(Արդէն տպագրւած)

I ԱԳԱՄ ՈՒ ԵԻԱ. Կամէզիա, 2 գործ:

II ԵՐԶԱՆԿՈՒԹԵԱՆ, ՀԱՄԱՐ. զրամ. 3 գործ.

III ԺԱՅՈՒ. պիէս 4 գործ.

IV ԲԱՂՆԸՍԻ ԲՈՂՉԱՅ. Կատակ 2 գործ.

V ԴՈՆ ՊԻԷՏՐՈ ԿԱՐՈՒՉՈ. զրամ. 1 գործ.

VI ԿԱՐՄԻՐ ԾԱՂԻԿ. աշակերտական պիէս 3 գործ. 4 պատկեր.

X ՆԱԻ ՄԵՌԱՆ ՅԵՏՈՅ ԱՄՈՒՍՆԱՅԱՆ. Կատակ. 2 գործ.

№ 1

Բ Ա Յ Ի Ա Ծ Է 1908 Թ. Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

„ՅՈՒՇԱՐԱՐ“

Թատերական—գրական—գեղարուեստական

Պատկերազարդ երկշաբաթաթերթի

Այս տարի տալու է 20 պատկերազարդ համար, 10 պիէս—լաւերած, և իբր
ընծայ Աղամեանի գիպսի. պարելէֆր (որը ստանալ ցանկացողները պոստի
ձախս պէտք է ուղարկեն 50 կ.).

Յերթին աշխատակցում են մեր գրական-գեղարուեստական աշխարհի բո-
լոր անդամները:

Տարեկան բաժնեդրինն է 5 ռ. արտասահման 6 ռ.

Հասցէն՝ Тифлисъ, Редакция „Ушараръ“ կամ Redaction „Houcharar“
Tiflis.

Գրասենեակը գտնուում է Սոլջակի փողոց, տ. Յրբէլիի, № 14

Գինն է 40 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0303894

12.103